ՈՐՈՇՈՒՄ

15 հուլիսի 2011 թվականի **թիվ** 710 քաղ. Մոսկվա

«Երկաթուղային շարժակազմի անվտանգության մասին», «Արագընթաց երկաթուղային տրանսպորտի անվտանգության մասին» եւ «Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերն ընդունելու մասին

«Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Մաքսային միության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **որոշեց**.

1. Ընդունել Մաքսային միության հետեւյալ տեխնիկական կանոնակարգերը՝

«Երկաթուղային շարժակազմի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 001/2011) (կցվում է).

«Արագընթաց երկաթուղային տրանսպորտի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 002/2011) (կցվում է).

«Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 003/2011) (կցվում է) (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգեր):

2. Հաստատել՝

2.1. Ստանդարտների ցանկը, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է «Երկաթուղային շարժակազմի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը (կցվում է).

2.2. Ստանդարտների ցանկը, որոնք պարունակում են «Երկաթուղային շարժակազմի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու եւ կատարելու ու արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ (կցվում է).

2.3. Ստանդարտների ցանկը, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է «Արագընթաց երկաթուղային տրանսպորտի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը (կցվում է).

2.4. Ստանդարտների ցանկը, որոնք պարունակում են «Արագընթաց երկաթուղային տրանսպորտի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու եւ կատարելու ու արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ (կցվում է):

2.5. Ստանդարտների ցանկը, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է «Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը (կցվում է).

2.6. Ստանդարտների ցանկը, որոնք պարունակում են «Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու եւ կատարելու ու արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների)

եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ (կցվում է):

3. Սահմանել՝

3.1. Տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ են մտնում սույն Որոշման պաշտոնական հրապարակման ամսաթվից երեք տարի հետո:

Տեխնիկական կանոնակարգերով նախատեսված տեխնիկական կանոնակարգման օբյեկտների (այսուհետեւ՝ օբյեկտներ) նկատմամբ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կամ Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջները չեն կիրառվում տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու ամսաթվից:

3.2. անցումային դրույթներ՝

– Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կամ Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին օբյեկտների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, որոնք տրվել կամ ընդունվել են մինչեւ տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելը եւ գործում են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը՝ պայմանով, որ Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում այդպիսի օբյեկտների արտադրությունը (կառուցումը, մոնտաժը, պատրաստումը, կարգաբերումը, շահագործման մեջ դնելը) ավարտվի մինչեւ նշված տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելը.

– նշված փաստաթղթերի առկայության դեպքում թույլատրվում է օբյեկտների բացթողումը Մաքսային միության միասնական մաքսային տարածք առանց Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշման: Համապատասխանության ազգային նշանով (շուկայում շրջանառության նշանով) այդպիսի արտադրանքի

մակնշումը պետք է իրականացվի Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

4. Հանձնաժողովի քարտուղարությանը՝ Կողմերի հետ համատեղ՝

4.1. մինչեւ 2013 թվականի հունվարի 1–ն ընկած ժամանակահատվածում ապահովել «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրում՝ արտադրանքի անվտանգության պահանջների հետ կապված նախագծման գործընթացներին ներկայացվող պահանջները՝ տեխնիկական կանոնակարգերի առարկայական ոլորտում ներառելու, ինչպես նաեւ կանոնագրքերը՝ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) նպատակներով կիրառվող փաստաթղթերի շարքին դասելու մասով փոփոխություններ կատարելու մասին արձանագրության ընդունումը.

4.2. մինչեւ տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու ամսաթիվը ապահովել Հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշմամբ հաստատված՝ սանիտարահամաճարակային վերահսկողության (հսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակային եւ հիգիենիկ միասնական պահանջներում փոփոխություններ կատարելը տեխնիկական կանոնակարգերի տեխնիկական կանոնակարգման օբյեկտներին ներկայացվող պահանջները դրանցից բացառելու մասով:

5. Ռուսական կողմին՝

5.1. տարին մեկ անգամից ոչ պակաս ապահովել սույն Որոշման 2-րդ կետում նշված ստանդարտների ցանկերի թարմացումը ցանկերում ներառված ստանդարտների կիրառման մոնիթորինգի եւ արդյունքների, ինչպես նաեւ Կողմերի մարմինների առաջարկությունների հիման վրա.

5.2. հաշվի առնելով Կողմերի առաջարկությունները՝ մշակել եւ սահմանված կարգով Հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել միջպետական ստանդարտների եւ կանոնագրքերի մշակման (փոփոխությունների կատարման, վերանայման) ծրագրի նախագիծը.

5.3. մինչեւ տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու ամսաթիվը, հաշվի առնելով Կողմերի առաջարկությունները, պատրաստել եւ սահմանված կարգով Հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել տեխնիկական կանոնակարգերի «նորարարական արտադրանք» եզրույթի սահմանումը հստակեցնելու մասով տեխնիկական կանոնակարգերում փոփոխություն կատարելու մասին առաջարկությունները:

6. Կողմերին՝

6.1. մինչեւ 2013 թվականի հունվարի 1–ն ընկած ժամանակահատվածում ապահովել իրենց պետությունների նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգերին.

6.2. մինչեւ տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելը սահմանել տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու համար պատասխանատու պետական հսկողության (վերահսկողության) մարմիններին եւ դրա մասին տեղեկացնել Հանձնաժողովին.

6.3. ապահովել տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու ամսաթվից տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) անցկացումը:

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝

Բելառուսի Հանրապետությունից	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Ս. Ռումաս	**Ժ. Այտժանովա**	**Ի. Շուվալով**